Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հոկտեմբերի 21 -ի N 741 - Ա
որոշման

«ՀԱՆՈՒՆ ԳԵՂԵՑԻԿ ԺՊԻՏԻ» ԾՐԱԳԻՐ

1.	**Ծրագրի նպատակը**	Անվճար ատամնաբուժական ծառայություններ մատուցել մինչև 18 տարեկան այն շահառուներին, որոնց օգնության ձեռք է մեկնել նաև «Երևան, իմ սեր» բարեգործական հիմնադրամը, հայրենիքի համար ընկած, առաջին և երկրորդ կարգերի հաշմանդամություն ունեցող ազատամարտիկների մինչև տասնութ տարեկան երեխաներին և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության շահառուներին:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	**Բարեգործը**	«Յուլիայի սկյուռիկներ» բարեգործական հիմնադրամ, հասցեն՝ ELEKTORALNA STR. Building 28, Post code 00-892 WARSAW, POLAND
4.	**Ծրագիրը կատարողը**	«Յուլիայի սկյուռիկներ» բարեգործական հիմնադրամ (հասցեն՝ Լյուքսեմբուրգի 2 նրբանցք, շ. 5, բն. 32, Նոր Նորք, 0090, Երևան, Հայաստան, ՀՎՀՀ՝ 00898896)
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Բնագավառը՝ առողջապահություն, վայրը՝ «Երևան, իմ սեր» բարեգործական հիմնադրամի շենքում (հասցեն՝ Երևան, Իսրայելյան 3)
6.	**Ծրագրի բյուջեն**	70,000,000 դրամ
7.	**Բարեգործություն ստացողը**	Անվճար ատամնաբուժական ծառայություններ են մատուցվելու մինչև 18 տարեկան այն շահառուներին, որոնց օգնության ձեռք է մեկնել նաև «Երևան, իմ սեր» բարեգործական հիմնադրամը, հայրենիքի համար ընկած, առաջին և երկրորդ կարգերի հաշմանդամություն ունեցող ազատամարտիկների մինչև տասնութ տարեկան երեխաներին և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության շահառուներին:

8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2019 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	• Բժշկական պարագաների և սարքավորումների ներմուծում, ժամկետը՝ 2019 թվականի հոկտեմբերի 25, պահանջվող ֆինանսական միջոցները՝ 9,815.95 եվրո (փոխադրման ծախսերը կազմել են 2160 եվրո, քաշը՝ 1321.1 կգ): Ծրագրի շրջանակներում ներմուծվող պարագաները և սարքավորումները օգտագործվելու են միմիայն բարեգործական նպատակներով, հետագայում էլ շահագործվելու են նոր բարեգործական ծրագրեր իրականացնելու համար: • Վերանորոգում, ժամկետը՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 25-ը, պահանջվող ֆինանսական միջոցները՝ 2,500,000 դրամ • Կահավորում, ժամկետը՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 29-ը, պահանջվող ֆինանսական միջոցները՝ 3,000,000 դրամ • Բժշկական ծառայությունների ձեռքբերում, ժամկետը՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, պահանջվող ֆինանսական միջոցները՝ 24,500,000 դրամ: Ձեռք բերվող ծառայությունները մատուցող սուբյեկտների շրջանակներն են՝ մասնավորապես, ծառայությունները մատուցվելու են անհատ բժիշկների հետ քաղաքացիաիրավական պայմանագրեր կնքելու կամ որպես հիմնադրամի աշխատողներ ներգրավելու միջոցով, այդ մասով հարկային արտոնություններ չեն ակնկալվում: • Մանկական ատամնաբուժության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար ատամնաբուժական սարքավորումների և նյութերի ձեռքբերում, ժամկետը՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, պահանջվող ֆինանսական միջոցները՝ 30,308,000 դրամ • Տնօրենի աշխատավարձ՝ 2,880,000 դրամ, ժամկետը՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը • Գրասենյակային պարագաների ձեռքբերում՝ 500,000 դրամ, ժամկետը՝ 2019 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	• Բժշկական պարագաների և սարքավորումների ներմուծում, պահանջվող ֆինանսական միջոցները՝ 9,815.95 եվրո, փոխադրման ծախսերը կազմել են 2160 եվրո, քաշը՝ 1321.1 կգ • Վերանորոգում, պահանջվող ֆինանսական միջոցները՝ 2,500,000 դրամ

		• Կահավորում, պահանջվող ֆինանսական միջոցները՝ 3,000,000 դրամ • Բժշկական ծառայությունների ձեռքբերում, պահանջվող ֆինանսական միջոց-ները ՝ 24,500,000 դրամ • Մանկական ատամնաբուժության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար ատամնաբուժական սարքավորումների և նյութերի ձեռքբերում, պահանջ-վող ֆինանսական միջոցները՝ 30,308,000 դրամ • Գրասենյակային պարագաների ձեռքբերում՝ 500,000.00 դրամ
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Տնօրենի աշխատավարձ՝ 2,880,000 դրամ Գրասենյակային պարագաների ձեռքբերում՝ 500,000 դրամ
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Համագործակցություն «Երևան, իմ սեր» բարեգործական հիմնադրամի և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ ծրագրի ընթացքի և արդյունքների մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ